

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԼԻ ԿՆՐՑԱՇԱՐ
9-րդ դասարան

Սիրելի՛ աշակերտ, օլիմպիադայի հարցաշարը միտված է բացահայտելու յուրաքանչյուրիդ ստեղծագործական կարողությունները և ինքնուրույն վերլուծական ունակությունները: Գրականության կախարդական աշխարհում բացահայտի՛ր քո աշխարհը: Եղի՛ր ազատ, անկաշկանդ. մտքերդ ձևակերպի՛ր կապակցված, հստակ և հասկանալի:

Հաջողություն և հաղթանակ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան

1. Մեսրոպ Մաշտոց. Գրեթի գյուտը: Մաշտոցի լուսավորական գործունեությունը:

Կորյուն «Վարք Մաշտոցի» երկը: Մաշտոցի կերպարը գեղարվեստական գրականության մեջ:
(5 մ)

2. Գրի՛ր Աբովյանի դասերը այսօրվա աշակերտին, հայ մարդուն և մեկնաբանի՛ր:

Ինչպե՞ս է կատարվում մեծ լուսավորչի պատգամը:
(5 մ)

3. «Գիշերը չէր քնել : Քրքրել էր թղթերը , երկար թերթել թերթերը բազմաթիվ , -օրա

գրեր, գրքեր, ձեռագրեր, գրություններ՝ մնացած դեռ Դորպատից»:

Գրի՛ր հատվածի հեղինակի անունը, ու՞մ է նվիրված հատվածը, ո՞ր ստեղծագործութե՛ք-

յունից է: Վերլուծի՛ր հատվածը: Գրի՛ր քո կարծիքը ստեղծագործության հերոսի մասին:

(5 մ)

4. «Ազատություն, - գոչեցի, -

Թող որոտա իմ գլխին

Փայլակ , կայծակ, հուր, երկաթ,

Թող դավ դնե թշնամին,

Ես մինչ ի մահ , կախաղան,

Մինչև անարգ մահու սյուն

Պիտի գոռամ, պիտի կրկնեմ

Անդադար, ազատություն» :

Ո՞վ է հեղինակը. ի՞նչ շրջասույթ կա նրա մասին: Երբ է գրվել բանաստեղծությունը . պատասխանի՛ր՝ ի՞նչ է ազատությունը քեզ համար, մարդու համար առհասարակ, հասարակության համար ընդհանրապես:

(5 մ)